որպէս կարծենք, ստուգիւ արժանաւոր ան-
ձինք ընծայելուն մէջ է »։

Ադուեչեան ազդարարն (Moniteur Orien-
tal) ևս կը գրէ ի 16 յուլիսի։

« ... Բոլոր հանդիսականաց վերայ տիրող
ընդհանուր ազդեցութիւնը չեմ կարող աւելի
լաւ բացատրել՝ քայց եթէ ըսելով, ամենայն
ակնածութեան արժանի է։ Քառորդ մի գա-
րու մէջ, յորմէ հետէ հաստատուած է այս
վարժարան, անդադար զարգացեր է և յա-
ռաջադիմեր։

« Անցեալ տարւոյ արդիւնքը քաջալերիչ
են, մանաւանդ ի մասին գիտութեանց և օ-
տար լեզուաց։ Զարմացանք հաճութեամբ
հանդերձ այն դիւրութեան վերայ՝ որով այդ
պատանիք իրենց խորհրդները կը պարզէին ոչ
միայն գաղղերէն, այլ և գերմաներէն և անգ-
ղերէն լեզուաւ։...

« Միով բանիւ՝ այս զարգացական հանդէս
մեզ և բոլոր հանդիսականաց թողուց գեղե-
ցիկ յիշատակ մի, և զայս համոզումն՝ թէ
Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանի ունե-
ցած յարմարուն աքանչելի համբաւն՝ ամենայն
մասամբ արդար է։ Նա և ստոյգ է, թէ
Մխիթարեան վարժարանս կը գործածէ՝ ուսուց-
ման դժուարին արուեստի մէջ վարժ արտա-
քին ընտիր ուսուցիչներ, յորս նշանաւորը են
տեարքն Յուլիոս Սանդոզ և Յ. Ի. Ռուքս »։

# ՍՏԱՄՈՔԱՀԱՏՈՒՄՆ

Աղրիդին իսկ հանրածանօթ է եթէ մը-
չափ արարաւ կը յառաջադիմէ վիրաբուժու-
թիւնը այս գիտական դարուս վերջերը, և թէ
մրչափ գերազանցած է քան զբժշկութեան ա-
րուեստն։ Իբրև յառաջադիմութեան առաջին
նշաններէն մին կը նկարագրեմք հոս ստա-
մոքահատումն (Gastrostomie), որ է գիւտ
երևելի Ցէրիլլոնի։ Կան հիւանդներ որոնց
ստուգը (œsophage) * զանազան հիւանդու-
թեամբ բոլորովին կը գոցուին, կարեն կե-
րակուր ուտել, առնուլ իրենց ամէն օրեայ
կարիւոր սնունդը այլ անկարելի կըլլայ և ոչ
ազգանակ կրնան խմել, որով օր աւուր վրայ
սնունդ չառնելով կը պակսի իրենց արիւնը,
կը նիհարնան, ուժէ կ'ինան, հուսկ ապա
կը հասնին մահուան դուռը։ Այսպիսի ցա-
ւալի հանգամանաց մէջ անհրաժեշտ պէտք է
ծակել ստամոքսը և խողովակով մը հասցնել
հոն լոյծ սննդարար նիւթեր, ինչպէս առա-
ջին անգամ հիւանդի մը վրայ կատարեց
նշանաւորն Ցէրիլլոն 1888ին 'ի Պարիս.
սոյն վիրաբուժին կը բերեն հիւանդն որուն
ստուգը գոցուած էր, և բան մը չէր կրնար
ուտել, և ոչ երկու երեք կաթիլ ջուր խմել,
նորա մահը մօտալուտ էր։

Քաղելով Ցէրիլլոնի գրածէն մի քանի
ծանօթութիւնք. կը տեսնեմք հոս համառօտիւ
թէ ինչպէս առողջացաւ այս հիւանդը։

* Բառս յունարէն αἰσοφαγος, սոյուգ-գաբանու-
թիւնն է, ὀιδειν, φαγειν տաճել, ուտել, որուն
հայերէն ամենահիշ բառն է Ստուգն։ Նեար-
գային և գնդերային գլանաձև խողովակն է որ
կրսկսի անմիջապէս կոկորդէն (gosier) և կը
հասնի մինչև ցվերին ստամոքսաբերան, այս ցրն-
ցոնչէն կամ խողովակէն կ'անցնին կերակուրք
և կը մտնեն ստամոքսի մէջ։ Ստուգն բառը
նախնեաց գրոց մէջ գործածուած է Գր. Նիւս.
Մեկն. Երգ. — « Ստուգն ոչ միայն կարօտ են
կերակրոյն ասելոյն. այլ և ծանապարհ »։ Վկա-
յաբանութիւն։ Ընդունի և զկերակրոցն մուտս
ստոյգսին և կոկորդաւն »։ Մի քանի բառագիրք
չեն գործածեր ստուգն այլ « կոկորդի ծակ »։ որ
թարգմանութիւն է Թուրքերէն բառին պոդազ
տէլիյի։

digitised by A.R.A.R.@

*Հիւանդը 50 տարեկան ուժով անձ մ'էր, շատ տարիներէ 'ի վեր ստամոքսի հիւանդութիւն ունեցած էր և կերակուրները դժուարաւ մարսելուն համար միշտ մորփիա դեղը ստիպուած էր գործածել։ Այս բաւական չըլլար, ցաւալի հիւանդին ստուգը կամաց կամաց կը գոցուի 8 սեպտեմբեր 1887ին։ Մսի պատառ կլլած ժամանակ շատ դժուարութիւն կը կրէր, և այն աստիճան կը հասնի որ ալ հաստատուն կերակուր չի կրնար առնել և կերածն ալ իսկոյն դուրս կուտար. այնպէս որ կը ստիպուի մինչև 20 դեկտեմբեր 1887 կէս հեղանիւթ՝ երբեմն բոլորովին հեղանիւթ կերակուրներով սնանիլ։ Ժամանակ կուգայ որ և ոչ հեղանիւթ կերակուրները կրնայ կլլել, երթալով կը գոցուի. ստուգը և հազիւ կրնայ ամենաքիչ արգանակ խմել, այն ալ կուրծքին վրայ կը կենայ և երկու վայրկենէն նորէն դուրս կու տայ։ Շատ անգամ վիրաչափերով կ'ուզեն զարման մը հասցընել անոր ստուգին, այլ անօգուտ։ Հիւանդին խորհուրդ կուտան երկու բժիշկ Ափրը, Բազնեռ որ Պարիս երթայ. նա հաւանելով առանց տուած խորհրդոյն, կ'երթայ 'ի Պարիս, 5 փետրուար 1888ին։*

*Հիւանդը հոն տասը օր բերանը բան չի գներ, հազիւ երբեմն քիչ մը կաթ կը խմէ, բայց նորէն անկարելի կ'ըլլայ զայն իր ստամոքսը խաւրել, մեծ դժուարութեամբ և նեղուելով դուրս կուտայ։ Տէրիլլոն շատ փորձեր կ'ընէ. բայց զհիւանդը այս ողորմելի վիճակէն չի կրնար ազատել, խեղճը կը ծիւրի կը մաշի օրուան մէջ հազիւ երկու երեք գրամ ջուր կրնայ բերանը գնել։ Այն ատեն Տէրիլլոն կ'առաջարկէ հիւանդին որ իր ստամոքսին վրայ ծակ մը բանայ. հիւանդը այս առաջարկը ամենայն սիրով և յօժարութեամբ կ'ընդունի. և երևելի հռչակաւոր վիրաբուժը կը պատրաստէ վիրահատութեան կարևոր գործիները, քլոռակերպերով կը մարեցնէ զհիւանդը. կը ծակէ ստամոքսը և այս ծակին մէջ անցընելով առաձգական խէժէ խողովակ մի, ասոր մէկ բերանը արծաթ թելով կը կարէ հիւանդին ստամոքսին և կը սկսի այս խողովակին ձեռքովը սննդարար լոյծ նիւթերով լեցընել հիւանդին ստամոքսը։ Վիրահատութիւնը երեք ժամուան մէջ կը կատարուի։ Հիւանդը դիւրաւ կ'արթըննայ, և ալ անկից վերջը իր առողջութիւնը գտնելով, օր օրուան վրայ կը գիրանայ և կ'ուժովնայ։ 1*

*Տէրիլլոն այս իր գիւտովը մեծ անուն հանեց և հռչակելի եղաւ ամէն տեղ.*

---

# ԳԻՏԱԿԱՆՔ

## ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ

Ձկներէ պատրաստուած ալիւր եւ հաց։

*Հանդերձ այնու որ փոխադրութեանց հնարք օր ի յօր կը զարգանան, դարձեալ հարկ կու լինի՝ որ ձկնորսութեան յառաջ բերած արդիւնք կարենան, ճոխ վաճառականութեան մ'հանդիպելով, բոլոր ծախուիլ։ Վասն զի յաճախ հարինգ* (Hareng) *ձկանց որսն այնչափ առատ կու լինի, որ փոխադրել կարելի եղած կողմեր բաւական գնող չեն գըտներ զանոնք վաճառելու։ Այսպիսի դիպուաց մէջ ստիպուած էին որսորդք զայնս իբրև անասնոց կեր վաճառել, (արդարև սքանչելի կեր). մինչդեռ ծովէն հեռու գտնուած տեղեաց մէջ՝ թարմ հարինգ ստանալ փափագողաց համար, սննդեան վերաբերող իրաց մասին հաստատուած դիւրագնութեան օրէնք անկատար կու մնային։*

*Այսոր համար միշտ կը խնդրուէր, և արդ եւս կը խնդրուին. գործադրելի հնարք որով ըստ կարելւոյն նուազ դժուարութեամբ փոխա-*

digitised by A.R.A.R.@